ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներ և մեթոդներ: Ուսուցման մեթոդների ընտրության չափանիշներ

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Զաքարյան Ազնիվ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Պեյո Յավորովի անվան 131 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն……2

Ներածություն……3

Գլուխ 1. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներ և մեթոդներ: Ուսուցման մեթոդների ընտրության չափանիշներ……5

Գլուխ 2. ՈՒսուցման Ինտերակտիվ մեթոդներ……..11

Եզրակացություն……19

Գրականության ցանկ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ., ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ., Դակար)[1]:

Թեմայի արդիականության հիմնավորում: Այսօրվա կրթական պահանջն է՝ ուսուցումը դարձնել համագործակցային և աշակերտակենտրոն: Աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար պետք է զարգացնել սովորողի քննադատական, ստեղծագործական մտածողությունը, ձևավորել կյանքի նկատմամբ ակտիվ վերաբերմունք ունեցող քաղաքացի: Եվ այս խնդրի առջև կանգնած ուսուցիչը պետք է կարողանա համահունչ քայլել կրթական համակարգում տեղի ունեցող գործընթացների հետ և իր գործողությունները պլանավորելիս հաշվի առնել ոչ միայն մատուցվող գիտելիքները, այլև այն, թե ինչպես կարելի է այդ գիտելիքները հասանելի դարձնել աշակերտներին: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը նպաստում է սովորողի մոտ քաղաքական ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը:

Հասարակագիտության դասընթացում պետք է ձևավորվի գիտելիքների այնպիսի համակարգ, որը կնպաստի քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորմանը: Պետք է այնպես կազմակերպել դասը, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ, ինքնուրույն և լիարժեք անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպմանը, աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը: Այս աշխատանքի ընթացքում կանդրադառնանք ուսուցման արդյունավետ մեթոդներին, որոնք կարևոր նշանակություն ունեն «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ առայսօր «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասապրոցեսը դարձնում է հետաքրքիր և հասանելի:

«Հասարակագիտություն» առարկայի **նպատակն** է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման

[1] Ուսուցման պրոյեկտներ / Ա. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, էջ 7:

արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի: Եվ այդ ամենին հասնելու ճանապարհին շատ կարևոր է նյութի մատուցման մեթոդը, որը էլ ավելի արդյունավետ է դարձնում այն:

Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ **խնդիրները՝**

բացահայտել արդյունավետ մեթոդների դերը, նշանակությունը,

•ուսումնասիրել ու ներկայացնել «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում օգտագործվող արդյունավետ հնարները և մեթոդները,

• «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացնում ինտերակտիվ մեթոդների կիրառման առանձնահատկությունները, ներկայացնել առավել արդյունավետ մեթոդներ,

Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ փոփոխությունները կանխորոշում են ուսուցման մեթոդների արդիականացման անհրաժեշտությունը: Թոմաս Կունի կարծիքով[2], հասարակության զարգացման արդի փուլում կրթության մեջ նկատվում են կրթական հարացույցների փոփոխություններ, և կրթության փիլիսոփայության, մանկավարժության մեջ տեղի է ունենում հումանիտար և մարդասիրական շրջադարձ, որը ենթադրում է մարդու և կրթության նոր մեթոդաբանության ուսումնասիրություն: Կարելի է եզրակացնել, որ փոխվել են կրթության գերակայությունները, որ ենթադրում է համակարգի ներսում կառուցվածքային տարրերի մեթոդաբանության վերափոխում, որը պետք է միտված լինի ապահովելու երկրի սոցիալտնտեսական, իրավական պահանջմունքները, անձի, հասարակության, պետության պահանջների կայուն հարաբերակցությունը: Ժամանակակից մանկավարժական գործընթացի կազմակերպմանն առաջադրվող նոր խնդիրների լուծման նպատակով տարբեր որոնողական աշխատանքներ են իրականացվում, որոնք ուղղված են նոր մեթոդների, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևերի և տարբեր միջոցների ուսումնասիրությանը, փորձարկմանը և տարածմանը:

Ուսուցանվող նյութի ներկայացման մատչելիությունից և հետաքրքրությամբ է պայմանավորված դասի արդյունավետ անցկացումը:

[2] Տե՛ս, Թոմաս Կունն, Գիտական հեղափոխությունների կառուցվածքը, Ձանգակ հրատ 2004թ, էջ 127:

Գլուխ1. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ մեթոդներ և մեթոդներ: Ուսուցման մեթոդների ընտրության չափանիշներ:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա:

Ուսուցումը հասարակության կողմից հատուկ կազմակերպված, մանկավարժական առաջնային նշանակություն ունեցող գործընթաց է, որի էական հատկանիշները պայմանավորված են այդ գործընթացի երկկողմանիության իրողությամբ, երեխայի մտավոր, անձնային զարգացումն իրականացնելու, զարգացման արդյունավետ տեմպ հաստատելու, կրթվածության որոշակի մակարդակ ապահովելու նպատակադրմամբ: «Ուսուցումը բնորոշելիս կարևորվում է հատկապես «ինչպե՞ս սովորեցնել» հարցին ուշադրություն դարձնելը, քանի որ ուսուցման ողջ գործընթացի արդյունավետությունը դրական իմաստով պայմանավորվում է այդ հարցի պատասխան դարձած ուսուցման մեթոդների տեսությամբ»[3] :

Ուսումնական գործունեությունը հիմնվելու է խառը ուսուցման ձևաչափի վրա (blended): Կիրառվելու են դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները: Ուսուցումն իրականացվելու է համադասարանական, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում, ելնելով՝ թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

[3] Ամնուելյան Ա, Ադիսանուր մանկավարժագիտություն, նոր դասընթաց, ուսումնական ձեռնարկ, Երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր., «Զանգակ 97», էջ 105:

- ուսումնական նյութի բացատրում,

- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ,

- աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների հետ՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ):

- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում,

- հիմնախնդիրների հետազոտում,

- հանդիպումներ, - մրցույթների անցկացում,

- հաշվետվությունների և էսսեների պատրաստում, - բանավեճերի կազմակերպում,

-ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում,

- դերային խաղեր,

- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում,

- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային, աշխատանքների կատարում,

- անդրադարձ ուսումնական գործունեությանը:

Գնահատման գործընթացում կիրառվելու են բազմաթիվ եղանակներ, բայց հիմնական շեշտը դրվելու է ձևավորող գնահատման վրա: Ձևավորող գնահատման ձևերից հատկապես կարևորվելու է հետադարձ կապը, որը հնարավորություն է տալու նշել աշակերտների ձեռքբերումները և բացթողումները, վերջիններս շտկելու ուղիները[4]:

Քննարկելով հստակ նպատակադրված ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության խնդիրը՝ կարևորում ենք գործունեության ընթացքում մեթոդի ընտրությունը՝ որպես առաջադրված նպատակի իրականացման առանցքային միջոց, ինչի շնորհիվ կատարվում են գործողություններ, ստեղծվում են իրադրություններ, լուծվում են խնդիրներ: Հարկ ենք համարում նշել, որ ուսումնադաստիարակչական գործընթացի մեթոդների ընտրությունը կախված է մի շարք չափանիշներից՝ ուսումնադաստիարակչական ընդհանուր նպատակներից, իրականացման համար անհրաժեշտ ժամանակից ու պայմաններից, ուսուցչի գործիմացությունից և այլն: Մեթոդի ընտրության և կիրառման խնդիրը բազմակողմ է և բազմագործոնային:, Ուսուցիչը, որն ունի իր գործելաոճը, մեր կարծիքով, կիրառում է մեթոդը՝ առաջնորդվելով իր սեփական արժեքներով, ապրումներով, տրամադրություններով, ակնկալիքներով ու սպասումներով: Շատ հաճախ մեթոդը կիրառվում է որպես օրենք, որը որոշված է նախօրոք, և այն պետք է կիրառության մեջ դրվի անկախ ամեն ինչից, քանի որ բոլորի համար է և բոլորի կողմից ընդունելի պետք է լինի: Այսպիսի պարտադրանքի պարագայում, որն անգամ

[4] Հանրակրթական «Հասարակագիտություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ (նախագիծ), էջ 6-7:

վերահսկվում է, մեթոդների այդպիսի ընտրությունն ու կիրառությունը, կարծում ենք, չի կարելի արդյունավետ համարել: «Ուսուցիչը, իմանալով իր ներքին կարիքները, կստեղծի գործունեության մի ուրույն և անկախ եղանակ»[5]: Ուսումնադաստիարակչական գործընթացում մեթոդի ընտրության հարցին անդրադարձել է նաև հայ մանկավարժ Գ. Էդիլյանը: Էդիլյանի կարծիքով ամեն մի ուսուցիչ պետք է իր սեփական մեթոդը ունենա, հարկադրել նրան անել այն, ինչը չի բխում նրա ներքին կարիքներից, ցանկալի չէ երբեք: Մեթոդի ընտրության հարցում պակաս կարևոր չէ սովորողի դերը, որն օժտված է ժառանգականությամբ և բացառիկությամբ, ունի անհատական առանձնահատկություններ և կրում է սոցիալական միջավայրի ներգործություններն ու ազդեցությունները: Կարծում ենք այս ամբողջության մեջ պետք է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի մեթոդի հարաբերումը երեխայի անձնային էության հետ՝ ելնելով սովորողակենտրոն մոտեցման հարացույցից: Յուրաքանչյուր ուսումնադաստիարակչական գործընթաց ունի զգայականդիտողական, մտավոր կարողությունները զարգացնող, բարոյական որակները, կամքը ձևավորող, կրթող ու դաստիարակող կողմեր, որոնք բոլորն էլ կարևոր են և ապահովում են երեխայի անձի զարգացումը: Մեթոդի ընտրության գործում գլխավոր է դառնում դրանց փոխկապվածության հարցը, որը կարող է ապահովել արդյունավետ, ներդաշնակ, ազդեցիկ հարաբերումներ ինքն իրեն, սոցիալական միջավայրի և հասարակության հետ: Դա նշանակում է դաստիարակության նպատակների մեջ ամփոփված են անձնավորության «ես»-ի զարգացումը, մարդուն քաղաքացի դարձնելու, նրան հասարակական կյանքին ինտեգրելու, մարդուն աշխատել և ապրել սովորեցնելու գաղափարներն ու մոտեցումները:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, մեթոդի ընտրությամբ է պայմանավորված նաև սովորողի կողմից իրականացվող ինքնուսուցման ու ինքնադաստիարակության գործընթացների արդյունավետությունը, որը գուցե հետագայում նրան հնարավորություն կտա առանձնանալու հասարակության մեջ՝ ըստ իր ձեռք բերած անձնային բարձր որակների, դիրքորոշումների, գործունեության սկզբունքների և դրանց արդյունավետության տեսանկյունից կյանքում ապրելու իր մեթոդն ընտրելու:

Ուսուցման բազմազան մեթոդների մի մասը հաջողությամբ կիրառվել և կիրառվում են: Սակայն հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ:

[5] Крившенко Л. П., Педагогика, учебник, Москва 2005, էջ 238:

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Իսկ ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործության մեթոդներ[6]:

«Ինտերակտիվ» հասկացությունը (անգլ. interaction՝ փոխազդեցություն, փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել, փոխազդել միմյանց վրա) մանկավարժության ոլորտ է ներմուծվել սոցիալական հոգեբանությունից: Հոգեբանական բառարաններում այն դիտարկվում է որպես միմյանց հետ փոխազդեցության մեջ գտնվել, փոխազդել, մարդու կամ ինչ-որ օբյեկտի հետ (օր.՝ համակարգիչ) զրույցի, երկխոսության մեջ գտնվելու կարողություն[7]:

Սոցիալական ինտերակտիվությունը գործընթաց է, որի ժամանակ անհատը խմբային հաղորդակցման միջոցով իր վարքագծով ազդում է մյուսների վրա: Հայտնի հոգեբան Կուրտ Լևինը պնդում էր, որ մարդկանց վարքում և դիրքորոշումներում դրական և նպատակային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում խմբային, այլ ոչ թե անհատական համատեքստում[8]:

Մանկավարժական տեսանկյունից ինտերակտիվ ուսուցման հիմքում սովորողի և կրթական միջավայրի փոխազդեցությունն է, գիտելիքների ձեռքբերման համատեղ գործընթաց, որի ընթացքում անընդհատ փոխվում է գործունեության ձևը՝ խաղ, բանավեճ, քննարկում և այլն: Ուսուցման փոխներգործուն մեթոդները՝ որպես համատեղ գործունեություն խթանում են սովորողների ճանաչողական ակտիվությունը, նպաստում երկխոսական, համագործակցային կարողությունների ձևավորմանը: Փոխազդելով միմյանց վրա՝ մասնակիցները տեղեկություն են փոխանակում, համատեղ լուծում են խնդիրներ, մոդելավորում են իրավիճակներ, գնահատում իրենց կատարած աշխատանքը, սեփական վարքագիծը, այսինքն՝ տիրում է համագործակցային մթնոլորտ: Աշխատանքի նկատմամբ նման մոտեցումը բարձրացնում է սովորողների ինքնագնահատականը, վստահությունը սեփական մտավոր ունակությունների նկատմամբ, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է աշակերտակենտրոն կամ ուսանողակենտրոն և առավել արդյունավետ: Փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրանք ապահովում են ուսուցման գործընթացի

---

[6] Ասատրյան Լ.Թ, Հակոբյան Գ.Հ, Ասատրյան Մ.Ա, Գևորգյան Մ.Մ, Կարապետյան Ն.Զ, Բաղդասարյան Ա.Ա, Մանկավարժություն, Երևան, Կիտագերս, 2017, էջ 148:

[7] Տես www.abisoghomyan.wordpress.com

[8] Курт Левин «Психология толпы. Социальные и политические механизмы воздействия на массы», էջ 174.

մասնակից սուբյեկտների փոխադարձ ակտիվության բարձր մակարդակ, որը ներառում է ինչպես զգայական, հոգևոր ոլորտը, այնպես էլ փոխազդեցության գործնական ուղղվածությունը: Հասարակագիտության ուսուցման գործընթացում ինտերակտիվ գործունեությունը ենթադրում է համատեղ խմբային աշխատանք, առողջ քննադատություն, հանդուրժողականություն, պատասխանատվություն խմբային և անհատական հարաբերությունների դաշտում և միմյանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունք: Այսինքն՝ ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են դասավանդող-սովորող, սովորող-սովորող հարաբերությունում համագործակցային կարողությունների զարգացմանը, միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, ինքնազարգացմանը:

Դիտարկելով ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառման արդյունավետությունը՝ կարելի է շեշտադրել որոշ կարևոր դրույթներ. 1. Փոխներգործուն մեթոդները հնարավորություն են տալիս ակտիվացնել գիտելիքների ընկալման, յուրացման և ստեղծագործական կիրառման գործընթացը, ինչը պայմանավորված է ոչ միայն սովորողների ակտիվ ներգրավվածությամբ, այլև գիտելիքների անմիջական կիրառման հնարավորությամբ («այստեղ և հիմա»): Ուսուցման փոխներգործուն մեթոդների շարունակական կիրառումը ձևավորում է տեղեկույթի յուրացման արդյունավետ ընթացք, փոխադարձ վստահության մթնոլորտ. սովորողները չեն վախենում սխալ մտքեր, նախադասություններ ասել: 2. Ուսուցման գործընթացում փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունքում բարձրանում է սովորողների դրական մոտիվացիան, ինչը խթանում է նրանց որոնողական ակտիվությունը՝ մղելով հստակ գիտակցված գործողությունների: 3. Փոխներգործուն ուսուցման գործընթացում ձևավորվում է այլընտրանքային մտածողություն. Սովորողները սկսում են իրենց տեսանկյունից դիտարկել քննարկվող խնդիրը, իրավիճակը և լուծման եղանակները, հիմնավորում են իրենց մոտեցումները, ապացուցում իրենց համոզմունքները: Ուսուցման այս մեթոդների կիրառման ընթացքում ձևավորվում են նաև դիմացինին լսելու, նրա կարծիքը հաշվի առնելու, համագործակցելու, թիմային աշխատանքի կարողություններ, գործընկերային հարաբերություն, հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունք ընդդիմախոսի նկատմամբ: 4. Սովորողները ձեռք են բերում ուսումնական նյութի ակտիվ յուրացման փորձ, ռեֆլեքսիայի, ապրումակցման, հանդուրժողականության որակներ: 5. Ուսումնական խումբը ձեռք է բերում հաղորդակցական և փոքր խմբերում աշխատելու կարողություններ, խմբի համար կարևոր միասնական արժեքային կողմնորոշում, համատեղ գործունեության կանոնների, նորմերի ընդունում, իրավիճակով պայմանավորված սոցիալական դերերի ճկուն փոփոխություն, խմբային ռեֆլեքսիայի գործընթացում վերլուծություն, ինքնավերլուծություն, փոխզիջում:

Հասարակագիտության ուսուցման գործընթացում, դասավանդողը ինտերակտիվ մեթոդների ընտրություն կատարելիս, պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, 10 ինչպիսիք են թեմայի ուսուցման նպատակները, խնդիրներն ու բովանդակությունը, ուսումնական նյութի ծավալն ու բարդությունը, սովորողների պատրաստվածության մակարդակը, փորձի առկայությունը, սովորողների տարիքը, ծանրաբեռնվածությունը, դիմացկունությունը, ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները, սովորողների թվաքանակը լսարանում և այլն: Բնականաբար, ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառումը թելադրում է որոշակի փոփոխություններ նաև գնահատման համակարգում՝ հիմքում ունենալով սուբյեկտ-սուբյեկտային գործունեությունը: Դասավանդողի ուշադրության կենտրոնում ոչ թե ճիշտ պատասխանն է, այլ այդ պատասխանին հասնելու ճանապարհը, ձևը: Սովորողների սխալները, բացթողումներն ուսուցիչն օգտագործում է որպես ուսումնական գործընթացի մաս, վերլուծում մտածողության տրամաբանությունը՝ կատարելագործելով մտածական գործընթացները: Խմբային աշխատանքի որակական գնահատականը կազմում են ինչպես ուսումնական արդյունքները, այնպես էլ ձևավորված անձնային որակները՝ քաղաքավարությունը, համբերատարությունը, փոխօգնությունը, ընկերասիրությունը: Գնահատվում է ամբողջ խմբի աշխատանքը. չի կարելի միևնույն խմբում աշխատող սովորողներին տալ տարբեր գնահատականներ: Հասարակագիտության ուսուցման գործընթացում ինտերակտիվ մեթոդներ կիրառելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել որոշ ելակետային դրույթներ՝ սկզբունքներ:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական սկզբունքներն են՝ փոխազդեցությունը, փոխուսուցումը, սովորողի ակտիվությունը, համագործակցությունը, ինքնարտահայտման խրախուսումը, հետադարձ կապը և այլն[9]:

Գլուխ2. Ուսուցման Ինտերակտիվ մեթոդներ

[9] Միրզախանյան Լ. Ռ, Իրավագիտության ուսուցման մեթոդիկա Ռուս. ձեռնարկ-էր., Կիտոգերս, 2015, էջ 92:

Ուսումնական գործընթացում ներկայումս ինտերակտիվ մեթոդներից հաջողությամբ կիրառվում են հարց ու պատասխանի մեթոդը, բանավեճը, մտքի գրոհը, հիպոթետիկ խնդիրները և այլ մեթոդներ: Սակայն, միևնույն ժամանակ պետք է նշենք, որ ուսուցման գործընթացում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհ, և որևէ մեթոդ, եղանակ, սկզբունք, հնար չի կարող համարվել միակ ճշմարիտը: Ավելին, նշված մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ, մասնավորապես՝ ժամանակային առումով: Այդ դեպքում կարելի է կիրառել ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այլ դրա առանձին տարրեր կամ հարմարացնել դասացուցակը՝ կազմելով կրկնակի ժամեր:

1. **Հարց ու պատասխանի մեթոդը՝** որպես հասարակագիտության դասավանդման արդյունավետ (փոխներգործուն) ինտերակտիվ մեթոդ: Հարց ու պատասխանի մեթոդը դասավանդման ինտերակտիվ մեթոդներից է, որը խթանում է սովորողի ակտիվությունը, նպաստում է դասապրոցեսին սովորողների ներգրավվածությանը[10]:

   Հարց ու պատասխանի մեթոդը կարող է օգտագործվել դասախոսության փոխարեն: Այս մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է կազմել հարցերի ու պատասխանների ցանկ՝ ապահովելու համար թեմայի բազմակողմանի քննարկումը դասի ընթացքում: Հարցերը պետք է պատշաճ կերպով նախապես կազմվեն՝ երաշխավորելով դասի համար ողջ անհրաժեշտ տեղեկատվության ստացումը մասնակիցների կողմից: Հարց ու պատասխանի մեթոդը կիրառելիս՝ դասը վարողը հարցը տալուց հետո պետք է մի քանի վայրկյան սպասի՝ հնարավորություն տալով մասնակիցներին մտածել պատասխանելուց առաջ: Դասը վարողները պետք է ուշադիր լինեն, որպեսզի թույլ չտան առավել բարձր առաջադիմությամբ մասնակիցներին գերակայել հարց ու պատասխանի ընթացքում: Հարցերն ու հարցադրումները նպաստում են՝ ուսուցման գործընթացում սովորողների ակտիվության ու ներգրավվածության աճին, նյութի յուրացման ու ընկալման շրջանակների ընդլայնմանը, նյութի ընկալման մակարդակը պարզելուն ու գնահատելուն, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, սովորողների կողմից ուսուցանվող նյութի կամ գաղափարի վերաբերյալ սեփական եզրահանգումներ կատարելուն:

   Ընդհանուր առմամբ ուսումնական նպատակները դասակարգվում են ըստ իմացական, ճանաչողական գործունեության վեց մակարդակների. գիտելիք,

[10] Տե՛ս, Ամիրջանյան Յու.Ա, Ահակյան Ա.Ա, Անկավարժություն, Եր., 2005, էջ 45:

ընկալում, կիրառում, վերլուծություն, համադրում, գնահատում: Հետևելով այդ մակարդակներին՝ հարցերը պետք է տրվեն հետևյալ հերթականությամբ՝ առաջին աստիճանակարգում գտնվում են փաստերի իմացությանն ուղղված հարցերը, երկրորդ մակարդակը՝ փոխակերպված արտահայտման կամ ընկալման մակարդակն է, որը սովորողին մղում է զգայական ընկալման օգնությամբ ստացված տեղեկատվությունը արտահայտել, մեկնաբանել այլ ձևով, երրորդ մակարդակը կիրառման հարցերն են, որոնք օգնում են տեղեկատվությունը կիրառել կոնկրետ դեպքերում, չորրորդ մակարդակը կոչվում է վերլուծության մակարդակ, այն նպատակ ունի սովորողներին մղելու ընդհանուր հասկացություններն ու գաղափարները տրոհելու առանձին բաղադրիչների և հայտնաբերելու դրանց միջև եղած կապերն ու օրինաչափությունները, համադրող հարցերը հինգերորդ մակարդակն են, որոնք խթանում են սովորողների ստեղծագործական երևակայությունը, տարբեր աղբյուրների վրա հենվելով՝ սովորողը կառուցում է իր սեփական մոտեցումը, հարցերի վեցերորդ՝ գնահատման մակարդակը, սովորողներին մղում է դատողություններ անելու ըստ ինքնուրույն սահմանած չափանիշների, սրանք դատողություններ են, որոնք ձևավորվում են սովորողների կողմից տարբեր արժեքների համադրման արդյունքում, վերջինս իր մեջ ներառում է նախորդ բոլոր մակարդակները: Հարց ու պատասխանի ինտերակտիվ մեթոդի էությունը առարկայական պատկերացնելու համար՝ որպես օրինակ փորձենք ներկայացնել «Դատական համակարգը ՀՀ-ում» թեմայի դասավանդումը: «Դատական համակարգը ՀՀ-ում» թեմայի շրջանակներում դասավանդողը կարող է ուղղել սովորողներին նմանատիպ հարցեր՝ Ի՞նչպիսին է ՀՀ դատական համակարգը, ներկայացնել դատավորի կարգավիճակը, ո՞րոնք են դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջները, ի՞նչ կառուցվածք ունի վճռաբեկ դատարանը, ո՞վ է նշանակում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորներին և քա՞նի տարի ժամկետով, Ի՞նչ մարմին է ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը և այլն: Այս մեթոդը կիրառելուց հետո դասավանդողը կարող է կատարել դասի հարցում և գնահատում:

2. **Բանավեճը՝** որպես իրավագիտության դասավանդման (փոխներգործուն) ինտերակտիվ մեթոդ: Բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների կարգավորված փոխանակություն է: Ի տարբերություն զրույցի, բանավեճը, բովանդակային առումով, սովորաբար, սահմանափակում ենք մեկ

առանձին թեմայով կամ հիմնահարցով և կառուցում որոշակիորեն սահմանված կարգով: Բանավեճը պետք է սկսել հիմնահարցի ներկայացմամբ, նոր տեղեկությունների հաղորդմամբ, ձայնագրությունների ունկնդրմամբ, խթանող հարցադրումների միջոցով և այլն:

Բանավեճի բուն ընթացքում դասավանդողը պասիվ դերակատարություն ունի: Նա, հիմնականում, գրանցում է կարևոր մտքերը և հետևում բանավեճի կանոնների (ակտիվ լսել, չընդհատել, փաստարկված պաշտպանել դիրքորոշումը և այլն) պահպանմանը: Հասարակագիտության ուսուցման գործընթացում բանավեճի մեթոդով պետք է ձևակերպվեն համապատասխան վիճահարույց հարցեր: Վիճահարույց հարցը նշանակում է, որ պետք է առկա լինի տվյալ հարցապնդմանը կողմ կամ դեմ մասնակիցների որոշակի քանակ: Մասնակիցները կարող են բաժանվել երկու մեծ խմբի, իսկ այնուհետև՝ փոքր ենթախմբերի՝ բանավեճի համար փաստարկներ նախապատրաստելու համար: Խմբերն ընտրում են իրենց անունից հանդես գալու իրավունք ունեցող անձանց: Բանավեճն անցկացնելուց հետո մասնակիցները քվեարկում են հարցապնդմանը դեմ կամ կողմ: Դասը վարողը բանավեճն իրականացնելու համար կարող է օգտագործել հետևյալ քայլերը: Բանավեճը իրականացնելու համար նախ հարկավոր է ներկայացնել բանավեճի առարկան մասնակիցների երկու խմբերին և ընտրել, թե ո՞ր խումբն է հանդես գալու դեմ և ո՞րը՝ կողմ փաստարկներով: Այնուհետև, բաժանել մեծ խմբերը առավելագույնը հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերի: Հնարավորություն տալ փոքր խմբերին նախապատրաստել իրենց փաստարկները և ընտրել երկու անձ (մեկը՝ որպես հիմնական բանախոս, ով պետք է ներկայացնի խմբի փաստարկները, իսկ մյուսը՝ որպես հակառակորդ խմբի փաստարկներին պատասխանող բանախոս) այդ փաստարկները ներկայացնելու համար[11]:

Բանավեճի անցկացման տարբերակ է փոքր բանավեճը: Այստեղ բոլոր մասնակիցները բաժանվում են երեք հոգուց բաղկացած խմբերի՝ եռյակների, յուրաքանչյուր խմբում փոքր բանավեճեր անցկացնելու համար: Եռյակում երկու մասնակից հանդես է գալիս որպես կողմ կամ դեմ փաստարկներ ներկայացնող բանախոս, իսկ երրորդ մասնակիցը

[11] «Անկավարժական միտք» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲԳՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲԳՀ-ի խորհրդի 17.12.2001 թ. նիստի որոշման (արձ. № 25)՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար, էջ 157:

հանդիսանում է բանավեճը վարող «դատավոր», ով վերահսկում է այն, որոշում է հաղթող կողմին և զեկուցում մյուս բոլոր մասնակիցներին այդ մասին:

3. **Մտքի գրոհը՝** որպես իրավագիտության դասավանդման (փոխներգործուն) ինտերակտիվ մեթոդ: Մտքի գրոհը մասնակիցների գաղափարների ազատ արտահայտումը խթանելու միջոց է: Այն ուսուցման կարևոր եղանակ է, քանի որ խրախուսում է մասնակիցներին նոր գաղափարներ արտահայտել՝ առանց քննադատության ենթարկվելու վախի: Մտքի գրոհի ընթացքում դասավանդողն առաջարկում է մասնակիցներին հնարավորինս շատ մտքեր արտահայտել՝ այդ մտքերի վերաբերյալ գրառումներ կատարելով գրատախտակի վրա[12]: Դասավանդողը պետք է գրառի նաև այն մտքերը, որոնք սխալ կթվան: Եթե պատասխանները ցույց տան, որ հարցը պարզ չի եղել, ապա այն պետք է վերաձևակերպվի: Դասը վարողները պետք է հետաձգեն հնչած առաջարկությունների քննադատությունները մինչև բոլոր մտքերի գրառումն ավարտելը: Օրինակ՝ թվարկել ժողովրդավարության հատկանիշները: Դասը վարողը հարցնում է ուսանողներին, թե որո՞նք են ժողովրդավարության հատկանիշները, դասը վարողը գրում է բոլոր պատասխանները գրատախտակին, այնուհետև, դասը վարողը բացատրում է յուրաքանչյուր պատասխանն ու քննարկում ծավալում դրա շուրջ:

4. **Հիպոթետիկ խնդիրները:** Հիպոթետիկ խնդիրները նման են ուսումնական օրինակներին, սակայն դրանք հաճախ հիմնված են արհեստածին իրավիճակների վրա: Դրանք կարող են ավելի օգտակար լինել, քան ուսումնական օրինակները այն դեպքում, երբ որոշակի հիմնախնդիր հատուկ մշակվում է տվյալ դասի նպատակների իրականացման համար: Հիպոթետիկ խնդիրների առավելությունն այն է, որ փաստերում կարելի է կատարել համապատասխան փոփոխություններ՝ ելնելով վարժության նպատակներից:

   Հիպոթետիկ խնդիրները, մասնավորապես, օգտակար են, երբ դասավանդվում են մարդու իրավունքների հետ կապված թեմաներ այնպիսի միջավայրում, որտեղ բազմաթիվ են մարդու իրավունքների խախտումները, քանի որ հղումը չի կատարվում ուղղակիորեն տվյալ երկրին[13]: Թեև փաստերը կարող են տվյալ երկրում առկա իրավիճակի հետ

[12] Տե՛ս, Ամիրջանյան Յու.Ա, Ատանյան ԱԱ, Անկախություն, Եր., 2005, էջ 70:
[13] http://arinj.schoolsite.am

նույնական լինել, հիփոթետիկ խնդիրը կարող է ներկայացվել որպես այլ երկրում տեղի ունեցող իրավիճակ:

5. **«Սովորեցնելով սովորում եմ»:** Այս մեթոդը կոլեկտիվ ուսուցման եղանակ է, որի ժամանակ ուսումնական նյութը բաժանվում է մասերի և հանձնարարվում սովորողներին: Նրանք յուրացնում են հանձնարարված հատվածը, քննարկում ընկերոջ հետ՝ ստեղծելով ժամանակավոր զույգ, որից հետո տեղի է ունենում կոլեկտիվ ամփոփում և ամրապնդում: Այսպիսով, ուսուցման ինտերակտիվ մեթոդներում արժևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումը, այլ գիտելիքի յուրացումը սեփական փորձի հիման վրա՝ հնարավորություն տալով զարգացնել կյանքի համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ: Ինտերակտիվ մեթոդները նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները, այսինքն՝ ոչ թե սոսկ պատրաստի գիտելիքների ստացումը, այլ դրանց ձեռքբերումը բանավեճի, երկխոսության, հաղորդակցման, շփումների, հուզական ընկալման միջոցով: Ինտերակտիվն ուսումնական գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև է, որը ստեղծում է ուսուցման համապատասխան միջավայր, որտեղ սովորողը զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, ինչն ուսուցման գործընթացը դարձնում է արդյունավետ:

6. **«Մտաբերում»** Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը: Հետաքրքիր է, որ «կրթություն» բառի լատիներեն «Education» համարժեք բառի արմատը՝ «Educe», թարգմանաբար նշանակում է «դուրս բերել»: Ուսուցման գործընթացում մենք հաճախ ավելի կարևորում ենք գիտելիք տալը: Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:

7. **«Խաղը ուսուցում»** Խաղը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խաղը:

8. **«Մանրամասնում»** Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Դասավանդողների մոտ սովորաբար առկա է մի

երևույթ, որը կոչվում է «գիտելիքի անեծք»։ Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա։ Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ։ Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է դժվարությամբ տրվում։ Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում։ Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից։ Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել։ Հետևաբար՝ շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը։

9. **«Օրինակներով ուսուցում»** Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան։ Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով։ Մինչդեռ. 18 Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ

ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

10. **«Կիսատ նախադասություն»**

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս

նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել[14]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

[14] Խաչատրյան Ա., Երրոբ, Ռուսուցման պրոցես ու նավետհնպոներ, Էր. , 2020, էջ 14-17, 40-41:

Ուսումնասիրելով «Հասարակագիտության» առարկայի ուսուցումը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ են մի շարք հնարները և մեթոդները: Մեր ուսումնասիրությունների արդյունքում եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

Ինտերակտիվ ուսուցման հիմնական սկզբունքներն են՝ փոխազդեցությունը, փոխուսուցումը, սովորողի ակտիվությունը, համագործակցությունը, ինքնարտահայտման խրախուսումը, հետադարձ կապը և այլն:

- ինտերակտիվ մեթոդների կիրառումը նպաստում է մարդու կողմից ինքն իրեն ձևավորելուն, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի դասավանդման ընթացքում տեսականն ու գործնականը զուգահեռվեն միմյանց: Հասարակագիտության դասընթացում ձևավորվում է գիտելիքների այնպիսի համակարգ, որը նպաստում է քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորմանը: Այս առարկայի ուսուցման գործընթացում սովորողի քաղաքացիական գիտակցությունը բարձրացնելու համար շատ կարևոր է ինտերակտիվ մեթոդների կիրառումը, ինչը նաև նպաստում է սովորողների գիտելիքների հարստացմանը ու ամրապնդմանը: Վերջիններս նպաստում են աշակերտների ակտիվ մասնակցելուն դասապրոցեսին:
- մասնակցում են բոլոր աշակերտները, որովհետև այդ դասերը հետաքրքիր են, մատչելի, գրավիչ: Նպաստում են մեծ ծավալ ունեցող ուսումնական նյութի ավելի հեշտ յուրացմանը, ինչպես նաև կարողանում են ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառել գործնականում:
- Հարցերն ու հարցադրումները նպաստում են՝ ուսուցման գործընթացում սովորողների ակտիվության ու ներգրավվածության աճին, նյութի յուրացման ու ընկալման շրջանակների ընդլայնմանը, նյութի ընկալման մակարդակը պարզելուն ու գնահատելուն, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, սովորողների կողմից ուսուցանվող նյութի կամ գաղափարի վերաբերյալ սեփական եզրահանգումներ կատարելուն:
- Ուսուցման ինտերակտիվ միջոցների օգտագործումը նպաստում է աշակերտի խոսքի զարգացմանը, թույլ է տալիս կատարել ինքնուրույն եզրահանգումներ, կատարել համեմատություններ:
- հետևյալ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ աշխատել թիմով, համագործակցել և կարողանալ ներկայացնել ստացած գիտելիքը և կատարած աշխատանքը, արտահայտել սեփական կարծիքը և կարողանալ պաշտպանել այն, փնտրել, գտնել և կիրառել ինքնուրույն, այլընտրանքային լուծումներ սոցիալական և հոգեբանական տարբեր իրավիճակներում, դրսևորել ստեղծագործական մտածողություն և այլն:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Եր., 2005:
2. Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ. Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն. Զ., Բաղդասարյան Ա. Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017:
3. Թոմաս Կուն, Գիտական հեղափոխությունների կառուցվածքը, Զանգակ հրատ., Եր., 2004:
4. Խաչատրյան Սերոբ, Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., 2020:
5. Մանուկյան Ս., Ընդհանուր մանկավարժագիտություն, նոր դասընթաց, ուսումնական ձեռնարկ, Երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր., «Զանգակ 97», 2008:
6. «Մանկավարժական միտք» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ–ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ–ի խորհրդի 17.12.2001 թ. նիստի որոշման (արձ. № 25)՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար:
7. Միրզախանյան Լ. Ռ., Իրավագիտության ուսուցման մեթոդիկա: Ուս. Ձեռնարկ, Եր., Արտագերս, 2015:
8. Крившенко Л. П., Педагогика, учебник, Москва 2005.
9. Курт Левин «Психология толпы. Социальные и политические механизмы воздействия на массы», Москва 2005.